

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարեն Ամիրյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի ասպիրանտ*

Հանրային-իրավական պատասխանատվության սկզբունքը ունի ոչ միայն ներազգային (ներպետական), այլև վերազգային բնույթ: Այս սկզբունքի վերազգային բնույթն ուղղակիորեն կապակցված է պետությունների կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների հետ: Հայաստանի Հանրապետությունը, միանալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային¹ և դրան կից արձանագրություններին (այսուհետ՝ Կոնվենցիա), ստանձնել է նաև Եվրոպական դատարանի իրավագործությունը ճանաչելու, ինչպես նաև վերջինիս կողմից ընդունված՝ Հայաստանի դեմ կայացված վճիռները կատարելու, իրավական համակարգը նախադեպային իրավունքին համահունչ դարձնելու պարտավորություն: Եվրոպական դատարանի հիմնական առաքելությունը պետությունների կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների ամբողջական ու արդյունավետ իրացումն ապահովելն է:

Դեռևս չկա հստակ միասնական դիրքորոշում այն հարցի շուրջ, թե արդյոք Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պարտադիր է պետությունների համար: Տեսաբանների մի խումբ գտնում է, որ, դատարանի նախադեպային իրավունքի իրավաբանական ուժի վերաբերյալ կարծիքների համաձայն, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ներպետական մակարդակում օժտված չէ պարտադիր իրավաբանական ուժով, հետևաբար ներպետական իրավակիրառ սուբյեկտներն ազատ են դրան հետևելու և դրանով առաջնորդվելու հարցում: Ներպետական դատարանի դատավորն ազատ է որոշելու՝ առաջնորդվել այդ նախադեպով, թե ոչ²: Հակառակ տեսակետի կողմնակիցների հիմնական մոտեցումը այն է, որ դատարանի նախադեպային իրավունքն անբաժանելի է Կոնվենցիայից և այդպիսով պետությունների համար պարտադիր է այնքան, որքան Կոնվենցիան: Կոնվենցիոն դրույթների մեկնաբանությունները, որոնք զարգացվել են մի շարք վճիռներում և դուրս են եկել կոնկրետ գործի փաստերի շրջանակներից, դիտվում են որպես այդ դրույթների բաղկացուցիչ մաս և որպես այդպիսին ձեռք բերում պարտադիր իրավաբանական ուժ³:

Այս առումով հատկանշական է Ռուսաստանի Սահմանադրական դատարանի որոշումը, որը վերաբերում է Եվրոպական դատարանի կողմից ՌԴ դեմ կայացված

¹ St´u Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Nov. 4, 1950, Europ. T. S. No. 5; 213 U.N.T.S. 221:

² St´u **Georg Ress**. The European Convention of Human Rights and States Parties: The Legal Effect of the Judgments of the European Court on Human Rights on the Internal law and before Domestic Courts of the Contracting States // Protection of Human Rights in Europe. Limits and Effects, էջ 240:

³ St´u **Jorg Polakiewicz**. The obligations of States Arising from the Judgments of ECHR. Summary:

և Կոնվենցիոն խախտում արձանագրած վճիռների կատարմանը և ընդհանրապես այդ վճիռների, դրանց իրավական հետևանքների և սահմանադրական արժեքանության հարաբերակցությանը: Նշենք նաև, որ այս որոշման համար որպես իրավական հիմք են հանդիսացել 14.12.2015թ. Ռուսաստանի Դաշնության «Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքում կատարված փոփոխությունները: Այդ որոշման հիմնական փաստարկները՝ ուղղված ՌԴ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների չկատարման իրավաչափության հիմնավորմանը, կարելի է բաժանել երկու մասի՝ ներքին և արտաքին:

Ներքին փաստարկի կամ հիմնավորման բովանդակությունը այն է, որ, երբ Եվրոպական դատարանի վճիռները, ինչպես նաև Եվրոպական դատարանի մեկնաբանությունները՝ հիմնված Կոնվենցիայի դրույթների վրա, շոշափում են ՌԴ Սահմանադրության սկզբունքները և դրույթները, ինչպես նաև երբ սահմանադրաիրավական տեսանկյունից ոչ իրավաչափ են, ապա Ռուսաստանը կարող է բացառության կարգով հետ կանգնել իր ստանձնած պարտավորություններից, և դա միայն այն դեպքում, երբ այդպիսի քայլը ՌԴ Սահմանադրության հիմնարար սկզբունքների և նորմերի խախտում թույլ չտալու միակ հնարավոր միջոցն է: ՌԴ Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ, կաշկանդված լինելով կատարելու ուժի մեջ մտած միջազգային պայմանագիրը, ՌԴ-ն, այնուամենայնիվ, պարտավոր է իր իրավական համակարգի շրջանակներում ապահովել Սահմանադրության գերակայությունը և հետևաբար չհետևել Եվրոպական դատարանի վճիռների իրացմանն այն դեպքերում, երբ այդ իրացումը հակասում է սահմանադրական արժեքներին:

Ինչ վերաբերում է արտաքին փաստարկին կամ հիմնավորմանը, ապա ՌԴ Սահմանադրական դատարանը, հիմնվելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) դրույթների վրա, արձանագրում է, որ երբ Եվրոպական դատարանը Կոնվենցիոն որևէ դրույթի տալիս է իր էությունից տարբերվող իմաստ կամ անում է Կոնվենցիայի օբյեկտին և նպատակին հակասող մեկնաբանություն, ապա պետությունը, որի նկատմամբ կայացվել է համապատասխան վճիռը, իրավասու է հրաժարվել այդ վճռի կատարումից, քանի որ դա դուրս է սեփական կամահայտությամբ վավերացված՝ Կոնվենցիայից բխող պարտավորություններից: Հետևաբար Եվրոպական դատարանի վճիռը չի կարող կատարման համար պարտադիր համարվել, եթե Կոնվենցիոն համապատասխան դրույթի մեկնաբանությունն իրականացվել է պայմանագրերի մեկնաբանման համընդհանուր կանոնների խախտմամբ: Այդպիսի մեկնաբանությամբ դրույթը կհակասի հանրային միջազգային իրավունքի իմպերատիվ այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են ինքնիշխան հավասարության, պետության ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքները:

Որպես հիմնական եզրահանգում՝ ՌԴ Սահմանադրական դատարանը նշում է, որ Եվրոպական դատարանի և ՌԴ միջև առաջացող տարածայնությունները կարգավորող մարմինը ՌԴ Սահմանադրական դատարանն է, որը միայն հազվադեպ դեպքերում է հնարավոր համարում օգտագործել «առարկության իրավունքը», այն էլ՝ հանուն Եվրոպական դատարանի հավասարակշռված պրակտիկայի ձևավորման մեջ իր ներդրման¹:

Այս որոշումից հետո «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովը (Վեներտիկի հանձնաժողով) 2016թ. մարտի 11-12-ի 106-րդ

¹ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի՝ 2015 թ. հուլիսի 14-ի թիվ 21-Ո որոշումը:

լիազումար նիստում միջանկյալ կարծիք է ընդունել Ռուսաստանի Ղաշնության «Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի փոփոխությունների վերաբերյալ (15.03.2016թ., կարծիք համար 832/2015, փաստաթուղթ համար CDL-AD(2016)005¹): Վերլուծելով կատարված փոփոխությունները և դրա հիման վրա ՌԴ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ Վենետիկի հանձնաժողովի հիմնական դիրքորոշումն այս հարցի շուրջ հանգում է հետևյալին.

1. Միջազգային և ներպետական համակարգերի հարաբերակցության ընտրությունը յուրաքանչյուր պետության ինքնիշխան ընտրությունն է, սակայն պետությունը կաշկանդված է միջազգային իրավունքով, մասնավորապես Վիեննայի կոնվենցիայի 26-րդ և 27-րդ հոդվածներով: Վիեննայի կոնվենցիայից բխող միջազգային պարտավորությունների կատարման պատասխանատուն ողջ պետությունն է, այսինքն՝ պետական իշխանության բոլոր մարմինները, այդ թվում՝ Սահմանադրական դատարանը: Այդպիսով, պետական իշխանության բոլոր մարմինների պարտավորությունն է այն, որ գտնեն պայմանագրային դրույթների՝ Սահմանադրության հետ համաձայնեցման համապատասխան որոշումը (մասնավորապես՝ մեկնաբանման կամ նույնիսկ Սահմանադրության փոփոխման միջոցով): Ազգային օրենսդրության մեջ ոչ մի իրավական փաստարկ, այդ թվում՝ սահմանադրական իրավունքը, չի կարող արդարացնել այն գործողությունը կամ անգործությունը, որը խախտում է միջազգային իրավունքը:

2. Եվրոպական դատարանի դերը կանխորոշված է Կոնվենցիայի 32-րդ հոդվածով, որն ամրագրում է, որ Եվրոպական դատարանի իրավագործությունը տարածվում է բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանը և կիրառմանը: Իսկ Կոնվենցիայի 46-րդ հոդվածը պարտավորեցնում է պետություններին կատարելու Եվրոպական դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերով, որոնցում նրանք կողմեր են: Այս համատեքստում Եվրոպական դատարանի վճիռների՝ անընդունելի և անիրագործելի լինելու վերաբերյալ որոշումները խախտում են Կոնվենցիայի 46-րդ հոդվածը: Հիշյալ դրույթը հստակ և ոչ երկիմաստ իրավական պարտականություն է: Կոնվենցիայի 46-րդ հոդվածը տարբերություն չի դնում պետական իշխանության մարմինների միջև: Պետությունն ազատ է Եվրոպական դատարանի վճիռի հիման վրա իր իրավական պարտավորությունների կատարման միջոցառումների ընտրության հարցում, սակայն պայմանով, որ ձեռնարկվելիք միջոցառումները պետք է համատեղելի լինեն Եվրոպական դատարանի եզրահանգումների հետ: Եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն՝ պետությունները կատարելու կամ չկատարելու հարցում ընտրության հնարավորություն չունեն, և նրանց հայեցողությունն առկա է միայն կատարման միջոցառումների ընտրության առումով: Սակայն նույնիսկ այդպիսի հայեցողությունն անսահման չէ: Պետությունը պետք է հարգի Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ երաշխավորելու համար, որ ազգային մակարդակում կատարվող ցանկացած բարեփոխում իրականացվում է Կոնվենցիայի պահանջներին համահունչ:

3. Կատարված փոփոխություններով Սահմանադրական դատարանին իրավունք է վերապահվել որոշելու Եվրոպական դատարանի վճիռների «իրագործե-

¹ St´u [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2016\)005-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2016)005-e) էլեկտրոնային հղումը:

լիությունը»: Այլ կերպ ասած, եթե Սահմանադրական դատարանը չի կարողանում վերացնել Սահմանադրության և միջազգային վճռի միջև հակասության վերաբերյալ անորոշությունը, ապա Ռուսաստանի Դաշնության տարածքում որևէ միջոց (ակտ)՝ ուղղված հարկադիր կատարմանը, չպետք է ձեռնարկվի (ընդունվի): Փոփոխություններն այս կերպ որդեգրում են «ամեն ինչ կամ ոչինչ» լուծումը. նրանք շարժվում են այն նախադրյալով, որ հնարավոր հակասությունները պետք է կարգավորվեն՝ կա՛մ մերժելով կիրառել Եվրոպական դատարանի վճիռները, որն անթույլատրելի է, կա՛մ հռչակելով, որ այս վճիռների և Ռուսաստանի Սահմանադրության միջև հակասություն չկա: Եվրոպական դատարանի վճիռները կատարելուց հրաժարվել կնաշանակի անտեսել այն անձի շահերը, ում իրավունքները խախտվել են, և որի օգտին անհատական միջոցառումներ ձեռնարկելու մասին Եվրոպական դատարանը փաստել է: Սահմանադրական դատարանի գործողությունները, որոնք հիմնված են կատարված փոփոխությունների վրա, ոչ միայն արգելափակում են Եվրոպական դատարանի վճիռների կատարումը, այլև դրանից բխող ընդհանուր միջոցառումների ձեռնարկումը: Դա արգելափակում է կատարման ենթակա բոլոր միջոցառումները, այդ թվում՝ արդարացի փոխհատուցման վճարումը: Սա նույնպես անթույլատրելի է:

4. Կատարված փոփոխությունները չեն ամրագրում, որ եթե կատարման համար սահմանված միջոցառումը հակասում է Սահմանադրությանը, ապա պետական իշխանության մարմինները պետք է ընտրեն այլ միջոցառումներ: Այդ փոփոխություններով Եվրոպական դատարանի վճիռների իրացումն ամբողջությամբ արգելափակվում է: Այդպիսով, ներպետական համակարգի և Եվրոպական դատարանի վճռի համաձայնեցման նպատակով ոչ մի այլ միջոցառում չի կարող ձեռնարկվել՝ ուղղված այն բանին, որ Եվրոպական դատարանի վճիռների կատարումն իրագործելի դառնա: Պետությունները պետք է իրավակարգավորումից դուրս մղեն ներպետական իրավական համակարգի և Եվրոպական դատարանի վճիռների միջև հնարավոր խոչընդոտները և հակասությունները, այդ թվում, եթե դա հնարավոր է, բանակցությունների միջոցով: Սա գործիք է, որն ապացուցել է իր արդյունավետությունը: Ռուսաստանի Դաշնությունը պետք է դիմի երկխոսության, այլ ոչ թե ձեռնարկի միակողմանի միջոցառումներ, որոնք հակասում են Վիեննայի կոնվենցիայի պահաջներին, մասնավորապես 31-րդ հոդվածին:

5. Առաջացող տարածայնությունները հաղթահարելու համար առկա են մի շարք միջոցներ: Մասնավորապես, տարածայնությունները կարող են հաղթահարվել ներպետական սահմանադրական կարգի շրջանակներում՝ այնպիսի պատրաստակամությամբ, որ ազգային սահմանադրաիրավական դրույթները մեկնաբանվեն այնպես, որ ըմբռնումով մոտենան Եվրոպական դատարանի վճիռից բխող պահանջներին: Եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի միջև երկխոսությունը կարող է շարունակվել՝ հաշվի առնելով պետությունների պարտավորությունը՝ կատարելու Եվրոպական դատարանի վճիռները: Սակայն, եթե Սահմանադրական դատարանն այլևս ի գործու չէ, ապա պետության այլ մարմինները, մասնավորապես Սահմանադրությամբ նախատեսված օրենսդիրը, կարող են բանակցություններ նախաձեռնել կամ փնտրել խնդրի այլ ընդունելի լուծում կամ էլ քայլեր ձեռնարկել՝ դադարեցնելու իր պայմանագրային պարտավորությունները:

Որպես եզրահանգում՝ Վենետիկի հանձնաժողովը, արձանագրելով կատարված փոփոխությունները վերացնելու անհրաժեշտությունը, նշում է այն նվազագույն քայլերը, որոնք պետք է ձեռնարկի Ռուսաստանի Դաշնությունը: Դրանցից են մաս-

նավորապես հետևյալները.

- ՌԴ «Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքը պետք է հստակ ամրագրի, որ Եվրոպական դատարանի վճռում առկա որոշ կատարողական միջոցառումներ, այնպիսին, ինչպիսին է արդարացի փոխհատուցումը վճարելը, չեն կարող սահմանադրականության գնահատման օբյեկտ հանդիսանալ,

- Եթե Սահմանադրական դատարանը որոշի, որ հարկադիր կատարման միջոցը անհամեմատելի է Ռուսաստանի Սահմանադրությանը, ապա ռուսական իշխանություններն օրենքով պետք է պարտավորություն ստանձնեն գտնելու այլընտրանքային միջոցներ՝ միջազգային վճիռներն իրագործելու նպատակով: Այդ հնարավորություններից մեկը կարող է լինել օրենսդրական դաշտի, անգամ Սահմանադրության փոփոխությունը:

Միասնական մոտեցում չկա նաև այն հարցադրման շուրջ, թե ով է Եվրոպական դատարանի վճիռների՝ ներպետական մակարդակում կատարման համար պատասխանատվություն կրում: Տեսաբաններից ոմանք գտնում են, որ Եվրոպական դատարանի վճիռների համապարտադիրությունը տարածվում է միայն Կոնվենցիայի մասնակից պետությունների վրա և չի ներառում մասնակից պետության ներպետական մարմինների համակարգը: Որոշ տեսաբաններ էլ գտնում են, որ այն հասցեագրված է հիմնականում գործադիր իշխանությանը և ոչ ամենևին՝ օրենսդիր կամ առավել ևս դատական իշխանությանը: Ըստ նրանց՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու կոնվենցիոն պարտավորությունը վերաբերում է պատասխանող պետության բոլոր մարմիններին: Եվրոպական դատարանի վճիռների պարտադիր իրավաբանական ուժը պետք է տարածվի բոլոր պետական մարմինների վրա: Իրենց պարտավորությունների շրջանակում այդ մարմինները պարտավոր են ապահովել Դատարանի վճիռների կատարումը՝ վերջ դնելով այն իրավիճակին, որը Դատարանի կողմից ճանաչվել է որպես Կոնվենցիայի խախտում¹:

Այս հարցի շուրջ մեր մոտեցումն այն է, որ Եվրոպական դատարանի վճիռների կատարման համար պատասխանատվություն կրում է պետությունը՝ որպես մեկ միասնական օրգանիզմ՝ օրենսդիր, գործադիր և դատական համակարգի միջոցով: Կոնվենցիայի 46-րդ հոդվածով նախատեսված պարտավորության պատշաճ կատարման համար պատասխանատու է պետությունը՝ ի դեմս պետական իշխանության եռամիասնական համակարգի: Հետևաբար այդ պատասխանատվությունը չի սահմանափակվում միայն իշխանության առանձին ճյուղի շրջանակներով: «Դատարանի վճիռն ունի պարտադիր բնույթ, իսկ կատարման պատասխանատվությունը կրում է պետությունը ... իր ամբողջության մեջ վերցրած»²:

Ինչ վերաբերում է ՌԴ «Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի փոփոխություններին, դրա հիման վրա ՌԴ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշմանը և վերջիններիս վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կարծիքին, ապա գտնում ենք, որ նման իրավակիճակն իրապես խորհելու տեղիք է տալիս և իրավաընկալման նոր մոտեցումներ է առաջադրում՝

¹ Տե՛ս Հակոբյան Լ., Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների անմիջական գործողության հիմնահարցերը («Քաղաքական գլոբալ զարգացումները և միջազգային իրավունքի առանձին ինստիտուտների վերաբերյալ որոշ հիմնախնդիրները» (հոդվածների ժողովածու)), Երևան, 2010, էջ 62:

² Տե՛ս Պետրոսյան Շ., Եվրոպական դատարանի իրավագործությունը և ազգային իրավունքը// «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 3/92, 2007թ., էջ 33:

ուղղված ժամանակի փորձությանը: Սակայն այստեղ էականն այն է, որ ցանկացած եզրահանգում և լուծում պետք է կոչված լինի մարդու հիմնական իրավունքների և ազատությունների առավելագույն պաշտպանվածություն և դրան համարժեք երաշխավորվածություն ապահովելու՝ իրավունքի գերակայության սկզբունքից բխող հրամայականի իրացմանը:

Եվրոպական դատարանը նույնպես անդրադարձել է իր վճիռների կատարման հետ կապված հարցերին, որոնք պետությունների հանրային-իրավական պատասխանատվության մասին վկայող իրավական դիրքորոշումներ են: Մասնավորապես, Բելգիայի կողմից ներկայացված այն դիրքորոշմանը, որ արտասահմանական կապից ծնված երեխաների իրավական կարգավիճակը լիովին վերանայման անհրաժեշտություն ունի, ու դրա համար միակ պատասխանատվությունը կրում է բացառապես օրենսդիր մարմինը, Եվրոպական դատարանը նշել է, որ չի տեսնում որևէ պատճառ, որը կարող էր խոչընդոտ հանդիսանալ Բրյուսելի վերաքննիչ դատարանին և վճռաբեկ դատարանի կողմից Մարքսի գործով վճռում առկա եզրահանգումներին համապատասխան գործելու համար: Կոնվենցիայի 53-րդ հոդվածի հիման վրա իր պարտականությունը կատարելու միջոցների ընտրության հարցում պետության ազատությունը չի կարող թույլ տալ պետությանը կասեցնելու Կոնվենցիայի կատարումն այն ընթացքում, երբ համապատասխան բարեփոխումները դեռևս չեն կատարվել¹:

Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «Եվրոպական դատարանի վճիռների կատարումը» արտահայտությունը և պահանջը բավականին տարողունակ են: Սակայն, հենց դրա բովանդակային ծավալի բացահայտումն է այն ուղենիշը, որը թույլ է տալիս ամբողջապես հստակեցնել պետության պարտավորությունների շրջանակը: Եվրոպական դատարանի վճիռների կատարումը չի կարող սահմանափակվել լոկ վերջինիս եզրափակիչ մասում ամրագրված պահանջների կատարմամբ: Եվրոպական դատարանի վճիռը պետք է դիտարկել իր միասնության մեջ՝ որպես մեկ ամբողջական դատական ակտ: Հետևաբար կատարման են ենթակա ինչպես Եվրոպական դատարանի եզրափակիչ մասում ամրագրված պահանջները, այնպես էլ դատարանի կողմից տվյալ վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները: Եվրոպական դատարանի յուրաքանչյուր վճիռից հետո այն պետք է դառնա համալիր ուսումնասիրման առարկա՝ մի կողմից ապահովելու կոնկրետ պահանջների կատարումը, մյուս կողմից երաշխավորելու հետագա խախտումների բացառումը:

Եվրոպական դատարանի վճիռների կատարման ամբողջական ընկալման համար այն կարելի է դիտարկել Եվրոպական դատարանի կողմից պետություններին նեգատիվ և պոզիտիվ պատասխանատվության ենթարկելու, պետությունների կողմից՝ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու իմպերատիվ ու դիսպոզիտիվ, կոնկրետ և ընդհանուր պարտավորությունների համատեքստում:

Եվրոպական դատարանը Կոնվենցիային մասնակից պետություններին ենթարկում է հանրային-իրավական պատասխանատվության, որը դրսևորվում է վերջինիս պոզիտիվ և նեգատիվ տեսակների միջոցով:

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ նեգատիվ պատասխանատվությունը դրսևորվում է կոնվենցիոն կամ վերջինիս կից արձանագրությունների խախտում արձանագրելու միջոցով: 2002-2015թթ. ՀՀ դեմ կա-

¹ St' u Vermeire v Belgium, Judgment of November 29, 1991:

յացվել է շուրջ 60 վճիռ, որոնցում արձանագրված առավել կրկնվող խախտումներն ունեն հետևյալ տեսքը. 23.71%՝ հողված 6 (արդար դատաքննության իրավունք), 23.71%՝ հողված 5 (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք), 12.37%՝ հողված 3 (խոշտանգումների արգելում)¹:

Եվրոպական դատարանի կողմից կիրառվող նեգատիվ պատասխանատվությունը կարող է դրսևորվել նաև դրամական հատուցման տեսքով: Եվրոպական դատարանի վճիռները շատ հաճախ պետություններին պարտավորեցնում են արդարացի փոխհատուցում վճարել տուժողին պատճառված նյութական կամ բարոյական վնասի դիմաց: Վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ դեմ Եվրոպական դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցման գումարը 2007-2015թթ. կազմում է ավելիք քան ութ հարյուր հազար եվրո²:

Ինչ վերաբերում է իմպերատիվ ու դիսպոզիտիվ պարտավորություններին, ապա առաջին խմբի մեջ մտնում են այն պարտավորությունները, որոնց կատարումն ուղղակիորեն ամրագրված է համապատասխան իրավական ակտերում կամ Եվրոպական դատարանի վճիռներում (վճարել արդարացի փոխհատուցում, իրականացնել անհատական բնույթի միջոցառումներ, մասնավորապես՝ հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը եղած վիճակը, տեղեկացնել Կոմիտեին կատարված անհատական և ընդհանուր բնույթի միջոցառումների մասին), իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում այն պարտավորությունները, որոնց կատարումն անմիջականորեն ապահովված չէ իրավական պահանջով, այլ ավելի շատ կրում է քաղաքական-հայեցողական-կանխարգելիչ բնույթ (մասնավորապես՝ սահմանել Եվրոպական դատարանի վճիռից բխող համապատասխան նոր իրավակարգավորումներ, չկիրառել Կոնվենցիոն խախտման հիմքում ընկած ներպետական համապատասխան իրավանորմը կամ այն կիրառել Կոնվենցիային համահունչ մեկնաբանությամբ): Այս առումով հարկ ենք համարում նշել, որ դիսպոզիտիվ պարտավորությունները կրում են հայեցողական բնույթ այն առումով, որ պետությունը՝ ի դեմս իր իրավասու մարմինների, կարող է և չկատարել դրանք: Սակայն դրանց կատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանով մի դեպքում դադարեցվում է կոնվենցիոն խախտման հիմքում դրված իրավանորմի շրջանառությունը, իսկ մյուս դեպքում՝ կանխվում Եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ հետագայում Կոնվենցիոն նոր խախտում արձանագրվելու վտանգը: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2004) 5 հանձնարարական-առաջարկությունում պետություններին առաջարկվում է ապահովել, որ գոյություն ունեցնող Կոնվենցիայի հետ՝ Ղատարանի դատական նախադեպի լույսի ներքո, օրենքների նախագծերի համապատասխանության կանոնավոր ստուգման համար համարժեք և արդյունավետ մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել հնարավորին սեղմ ժամկետներում օրենքների և վարչական գործելակերպի հարմարեցումը Կոնվենցիային՝ Կոնվենցիայի խախտումներից խուսափելու նպատակով³:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայքէջ՝ <http://agent.echr.am/statistics.html>

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Rec (2004) 5 հանձնարարական-առաջարկությունն անդամ պետություններին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված չափանիշների հետ օրենքի նախագծերի, գործող օրենքների և վարչական գործելակերպի համապատասխանության ստուգման մասին», կետ 1-ին և 3-րդ:

Եվրոպական դատարանի՝ հանրային-իրավական պատասխանատվություն սահմանող վճիռները կարող ենք դասակարգել նաև մեկ այլ չափանիշով, այն է՝ ըստ բնույթի: Այսպես, վերջիններս ըստ բնույթի լինում են կոնկրետ և ընդհանուր:

Կոնկրետ բնույթի պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվությունը դրսևորվում է հետևյալ միջոցներով՝

ա) արդարացի փոխհատուցման վճարում,

բ) մինչև իրավախախտումը եղած վիճակի վերականգնում (*restitutio in integrum*),

գ) իրավիճակից բխող միջոցներ:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-758 որոշման մեջ կոնկրետ բնույթի միջոցների մասին նշել է. «Անհատական բնույթի միջոցառումները, որպես կանոն, ներառում են Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ներպետական դատական ակտերի վերանայումը: Ի կատարումն Եվրոպական դատարանի վճռի՝ նման անհատական բնույթի միջոցառումն անխուսափելի է լինում բոլոր այն դեպքերում, երբ կոնվենցիոն իրավունքի խախտման պատճառը ներպետական դատական վարույթի ընթացքում դատավարական նորմերի խախտումն է»: ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի իրավակարգավորման անարդյունավետությունը: Սակայն, չնայած այդ հանգամանքին, գտնում ենք, որ այն դեռ շարունակում է մնալ անկատար, ուստի հարկ ենք համարում շեշտադրել նոր հանգամանքների հետ կապված այն դիրքորոշումները, որը ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իր որոշումներում: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (ՍԴՈ-701, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-767, ՍԴՈ-833, ՍԴՈ-866, ՍԴՈ-871, ՍԴՈ-935, ՍԴՈ-943, ՍԴՈ-984, ՍԴՈ-1099, ՍԴՈ-1114) արտահայտել է սկզբունքային իրավական դիրքորոշումներ Հայաստանի Հանրապետությունում նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի, դրա արդյունավետության ու կենսունակության չափանիշների, այդ ինստիտուտի միջոցով անձի սահմանադրական արդարադատության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների վերաբերյալ: Վերոհիշյալ որոշումներում Սահմանադրական դատարանը մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

✓ «... նոր հանգամանքների առկայության պարագայում, այսինքն, երբ առկա է իրավունքի կիրառման օբյեկտիվ անհրաժեշտություն՝ պայմանավորված հակասահմանադրական ճանաչված նորմատիվ դրույթի կիրառման իրավաբանորեն հավաստված փաստով, ապա «դատական ակտի վերանայման վարույթի» հարուցումը, դատական ակտը վերանայելու գործընթաց նախաձեռնելն իրավասու դատարանի կողմից իրավաբանական անհրաժեշտություն է, այդ դատարանի սահմանադրական պարտականությունը, որի նպատակն անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումն է» (ՍԴՈ-984 որոշում),

✓ «...նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը**: Վերջինս, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս **վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը**

(restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը **հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում:** ... Վերանայման ինստիտուտը կարող է ծառայել իր նպատակին միայն այն դեպքում, երբ ապահովվի տվյալ գործի նոր քննություն՝ կիրառված նորմի հակասահմանադրականության և կոնվենցիոն իրավունքի խախտման փաստի առկայության պայմաններում՝ **հաշվի առնելով նաև սահմանադրական դատարանի և Սարդու իրավունքների եվրոպական դատարանի նոր հանգամանք հանդիսացող դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումները:** Նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է **ipso facto** հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը» (ՍԴՈ-1099 որոշում):

Ինչ վերաբերում է իրավիճակից բխող միջոցներին, ապա դրանք կիրառվում են՝ ելնելով գործի առանձնահատկություններից: Օրինակ, Եվրոպական դատարանը կարող է վճռում պահանջել, որ խափանման միջոց կալանքը փոխարինվի խափանման այլ միջոցով¹, դատապարտված կալանավորն ազատ արձակվի², դիմումատուն անմիջապես կալանավայրից տեղափոխվի մասնագիտացված բժշկական հաստատություն³, օտարված հողատարածքը վերադարձվի դիմումատուին՝ բաց թողնված եկամտի և փոխհատուցման վճարումներով⁴, ազգային դատարանում վեց ամսվա ընթացքում դատավարություն վերսկսվի⁵ և այլն:

Ընդհանուր բնույթի պոզիտիվ հանրային-իրավական պատասխանատվությունը հետազայում նմանատիպ իրավախախտումները կանխելու նպատակ է հետապնդում: Այն ունի պրևենտիվ նշանակություն: Այսինքն՝ ընդհանուր բնույթի միջոցներն ուղղված են օրենսդրական, ենթաօրենսդրական, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ու կատարելագործմանը: Հետևաբար, Եվրոպական դատարանի վճռից հետո, երբ արձանագրվում է կոնվենցիոն խախտում, պետական իշխանությունները և Նախարարների կոմիտեն լրջորեն ուսումնասիրության առարկա պետք է դարձնեն կայացված վճիռը, որպեսզի բացահայտեն այն գործոնները, որոնք հիմք են հանդիսացել իրավախախտում արձանագրելու համար: Լինում են դեպքեր, երբ իրավախախտման հիմքում ընկած է լինում օրենսդրության անկատարությունը (օրենսդրական բաց, իրավական անորոշություն, հանկարծային անհատականություն), իսկ որոշ դեպքերում ուղղակիորեն հակասություն է առաջանում

¹ Տե՛ս Ալեքսանյանն ընդդեմ Ռուսաստանի (Aleksanyan v Russia) գործով վճիռը (զանգաստ թիվ 46468/06, 2008թ. դեկտեմբերի 12, պարբ. 240):

² Տե՛ս Ֆատուլլան ընդդեմ Ադրբեջանի (Fatullayev v Azerbaijan) գործով վճիռը (զանգաստ թիվ 40984/07, 2010թ. ապրիլի 22, պարբ. 176-177):

³ Տե՛ս Սլավոմիր Մուսիալն ընդդեմ Լեհաստանի (Stawomir Musiał v Poland) գործով վճիռը (զանգաստ թիվ 28300/06, 2009թ. հունվարի 20, պարբ. 108):

⁴ Տե՛ս Դրիզան ընդդեմ Ալբանիայի (Driza v Albania) գործով վճիռը (զանգաստ թիվ 33771/02, 2007թ. նոյեմբերի 13, պարբ. 135):

⁵ Տե՛ս Սուլջանիկն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի (Suljagić v. Bosnia and Herzegovina) գործով վճիռը (զանգաստ թիվ 27912/02, 2009թ. նոյեմբերի 3, պարբ. 65(ii)):

Կոնվենցիայի և ներպետական իրավակարգավորման միջև: Նման պարագայում առաջացած վակուումից խուսափելու համար պետությունը պետք է անհրաժեշտ նոր իրավակարգավորումներ սահմանի: Ասվածի օրինակ է «Քեմպ Բելլը և Կոզանգո ընդդեմ Մեծ Բրիտանիայի» 1982թ. փետրվարի 25-ի գործը, որից հետո Մեծ Բրիտանիայում ուժի մեջ մտավ մարմնական պատիժների կիրառումն արգելող կրթության մասին նոր օրենք (Եվրոպական դատարանի վճիռը վերաբերում էր դպրոցներում կիրառվող մարմնական պատիժներին): Եղել է նաև այնպիսի պրակտիկա, երբ դրվել է բավականին յուրահատուկ պահանջ, օրինակ՝ կալանավայրերի պայմանների բարելավում¹:

Հայաստանի վերաբերյալ կարող ենք նշել, որ մեզ մոտ նույնպես կատարվել են մի շարք ընդհանուր պոզիտիվ պատասխանատվություն պարունակող պահանջներ: Օրինակ, «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (թիվ 21638/03) վճռի կատարման ընթացքում վերացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և «Պետական տուրքի մասով» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դրույթը²: Սակայն Եվրոպական դատարանի վճռի հիման վրա ընդհանուր բնույթի միջոցներ ձեռնարկելու իրավական մշակույթը մեզ մոտ դեռևս ոչ ամբողջական է գործում՝ պայմանավորված որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով:

Վերոշարադրյալից կարող ենք ընդհանրացնել և փաստել, որ Եվրոպական դատարանի որոշումների կատարումը կարող է ամբողջական լինել միայն հետևյալ պահանջների ապահովման դեպքում.

ա) վճարել արդարացի փոխհատուցման ձևով սահմանված գումարները,
բ) հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը եղած վիճակը,
գ) նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն առաջին հերթին պետք է հանգեցնի կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը,

դ) սահմանել համապատասխան նոր իրավակարգավորումներ՝ դրանով վերացնելով Կոնվենցիան խախտման պատճառ հանդիսացած՝ օրենսդրության մեջ առկա բացերը, անորոշությունները և անկատարությունները,

ե) կատարելագործել անհրաժեշտ ենթաօրենսդրական բազան՝ արձանագրված իրավախախտումները կանխելու համար,

զ) տեղեկացնել Կոմիտեին կատարված կազմակերպավարչատեխնիկական, օրենսդրական աշխատանքների, մինչև իրավախախտումը եղած վիճակի վերականգնման, այդ թվում՝ նոր հանգամանքով գործերի վերանայման ընթացքի և արդյունքների մասին,

է) չկիրառել Կոնվենցիոն խախտման հիմքում ընկած ներպետական համապատասխան իրավանորմը կամ այն կիրառել Կոնվենցիային համահունչ մեկնաբանությամբ,

ը) իրականացնել Եվրոպական դատարանի վճիռների կատարման մշտադիտարկում:

Ըստ Եվրոպական դատարանի կայացրած վճիռների կատարման վերաբերյալ

¹ Տե՛ս Նախարարների կոմիտեի թիվ (2003) 123 միջանկյալ բանաձևը Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (թիվ 47095/99) գործով վճռից հետո:

² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացը. Հայաստանում դրանց կատարման խնդիրներն ու առանձնահատկությունները, Երևան, 2011թ., էջ 70:

պաշտոնական վիճակագրության՝ 2007-2015թթ. ընթացքում ՀՀ կողմից կատարվել է 27 վճիռ, իսկ շուրջ 25 գործ դեռևս կատարման փուլում է¹:

Միևնույն ժամանակ, ՀՀ դեմ կայացված շուրջ 25 վճիռների կատարման ընթացքի վերաբերյալ մոնիթորինգը վկայում է, որ

- արդարացի փոխհատուցման ձևով սահմանված գումարներն ամբողջությամբ վճարվել են,

- գրեթե բոլոր գործերով իրականացվել են Նախարարների կոմիտեի կողմից սահմանված ընդհանուր բնույթ ունեցող միջոցները,

- իրավունքի խախտման զոհերից միայն 5-ն է, որ նոր հանգամանքով ներպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել դատարան,

- այն դեպքերում, երբ իրավունքի խախտման զոհերը նոր հանգամանքով ներպետական դատական ակտերի վերանայման պահանջ են ներկայացրել, գործերից մի մասի դեպքում դատական ակտերի վերանայում իրականացվել է, սակայն որևէ դեպքում նախկին դատական ակտով խնդրին նախկինից տարբերվող լուծում չի տրվել, և որպես հետևանք՝ գործի ելքը մնացել է անփոփոխ:

Մեզ համար մի կողմից մտահոգիչ է այն հանգամանքը, որ գործերի վերանայման արդյունքում գործի ելքը գերակշռորեն մնում է անփոփոխ, իսկ մյուս կողմից այն, որ իրավունքի խախտման զոհերը պատշաճ ջանասիրություն և պոզիտիվ վարքագիծ չեն դրսևորում նոր հանգամանքով ներպետական դատական ակտի վերանայման պահանջ ներկայացնելու առումով: Այս համատեքստում պետք է նշել, որ ճիշտ է, օրինակ, ՀՀ քրեական դատավարությամբ սահմանված դեպքերում անձինք նույնպես իրավունք ունեն նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնել դատարան, սակայն խնդիրը ավելի հիմնարար այնպիսի հարցում է, թե իրավական պետության և իրավունքի գերակայության հիմնարար արժեքներին համահունչ է արդյոք խախտված կոնվենցիոն իրավունքների վերականգնման հարցը հիմնականում թողնել հենց խախտված իրավունքի սուբյեկտի վրա: Չէ՞ որ որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ գուցե անձը նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու բողոք չի ներկայացնում: Արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ առկա է օրինական ուժի մեջ մտած երկու ակտ՝ մեկը ներպետական դատական ատյանի վերջնական դատական ակտը, իսկ մյուսը՝ ՀՀ մասնակցությամբ գործող համապատասխան միջազգային դատարանի որոշումը (մասնավորապես, Եվրոպական դատարանի վճիռը): ՀՀ մասնակցությամբ գործող համապատասխան միջազգային դատարանի որոշմամբ հավաստվում է անձի կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը, սակայն նման խախտման հիմքում ընկած ներպետական դատական ակտը շարունակում է օրինական ուժի մեջ մնալ լոկ այն պատճառով, որ անձը հետամուտ չի եղել իր խախտված իրավունքների վերականգնմանը: Կարծում ենք, որ համապատասխան իրավակարգավորումներ պետք է սահմանվեն, որոնցով, այն դեպքերում, երբ կհավաստվի կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը, պետությունն իր վրա կվերցնի խախտված իրավունքների վերականգնման ողջ իրավական գործընթացը՝ ելնելով այն հիմնարար գաղափարից, որ անձի նկատմամբ կիրառված և նրա իրավունքները խախտած ակտը չի կարող շարունակել ուժի մեջ մնալ: Այստեղ հարկ է նշել նաև այն, որ վերոնշյալի համատեքստում արդարադատության նպատակը խախտված կոնվենցիոն իրավունքների

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայքէջ՝ <http://agent.echr.am/statistics.html>

վերականգնումն է, ինչը լիարժեք կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ կան բավարար և ամբողջական օրենսդրական կարգավորումներ և իրավական մեխանիզմներ, որոնց պարագայում պետությունն ինքը կստանձնի խախտված իրավունքների վերականգնման առաջնորդողի դերը:

Ամփոփելով ներկայացված վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ Եվրոպական դատարանի կողմից ՀՀ դեմ կայացված վճիռների կատարումը, ազգային իրավական համակարգը Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին համահունչ և ներդաշնակ զարգացնելը, հաշվի առնելով նաև ազգային հոգեկերտվածքին և իրավամտածողությանը բնորոշ առանձնահատկությունները, ժողովրդավարական զարգացման ուղի ընտրած մեր երկրի համար ունի չափազանց էական նշանակություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա անձանց կոնվենցիոն իրավունքների վերականգնման և պաշտպանության, հետևաբար նաև Եվրոպական դատարանի վճիռները կատարելու՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորության բարեխիղճ կատարման և պատշաճ երաշխավորման համար հաճախ բավարար չէ միայն անհատական գանգատ ներկայացրած անձի իրավունքների վերականգնումը, եթե խնդիրն առնչվում է ներպետական իրավական համակարգի այնպիսի բարեփոխումների իրականացման անհրաժեշտությանը, որոնք կոչված լինեն ապահովելու մարդու՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանություն: Հետևաբար Եվրոպական դատարանի վճիռները հաճախ իրավական այն միջոցներն են, որոնք մատնանշում են ներպետական համակարգում իրավակարգավորման, իրավակիրառական (այդ թվում՝ դատական) պրակտիկայի կատարելագործման կոնկրետ ուղիներ: Այս համատեքստում ներկայացված շարադրանքը ցանկանում ենք եզրափակել այն դիպուկ բնորոշմամբ, որ տրվել է Եվրոպական դատարանի դերի մասին: Վերջինս հանգում է այն բանաձևմանը, որ մեզ մեծապես կարող են օգնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հարուստ փորձն ու դատարանի նախադեպային իրավունքի խելամիտ իրացումը մեր իրավական համակարգում: Պարզապես հղումներն այդ դատարանի վճիռներին մեր իրավաստեղծ ու արդարադատական պրակտիկային քիչ բան կարող են տալ: Էականը դատարանի հարուստ ու համաեվրոպական փորձառության վրա խարսխված իրավամտածողությունը մեր իրավական համակարգին ներդաշնակելն է¹:

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանի ելույթի տեքստը 2014թ. դեկտեմբերի 15-ին Երևանում հրավիրված՝ «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները և Եվրոպական դատարանում կառավարության լիազոր ներկայացուցչի դերը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հարցում» խորագրով միջազգային համաժողովում http://concourt.am/armenian/structure/president/articles/yerewan2014_am.pdf:

ВНУТРИГОСУДАРСТВЕННОЕ ОБЯЗАТЕЛЬСТВО ПО ИСПОЛНЕНИЮ РЕШЕНИЙ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА

Карен Амирян

Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

Автор выдвинул идею, что Европейский суд привлекает государства к позитивной и негативной ответственности, а также идею, что для государства возникают императивные и диспозитивные обязательства исполнять вынесенные против него решения Европейского суда.

В результате анализа заключается, что исполнение решений, вынесенных Европейским судом против РА, развитие национальной правовой системы созвучно и гармонично прецедентному праву Европейского суда, учитывая также присущие национальной менталитету и правовышлению особенности, имеет крайне существенное значение для нашей страны, избравшей путь демократического развития.

DOMESTIC OBLIGATION OF EXECUTION OF JUDGMENTS OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

Karen Amiryan

PhD Student of the YSU Chair of Theory of State and Law

The author has put forward the idea that the European Court of Human Rights imposes positive and negative liability on the states, as well as the idea that mandatory and discretionary obligations arise for the state to execute the judgments of the European Court of Human Rights against it.

As a result of the analysis we can conclude that the execution of judgments of the European Court of Human Rights against the Republic of Armenia, development of national legal system consonant and harmonious with the case-law of the European Court of Human Rights, also taking into account the peculiarities inherent in national mentality and legal thinking, are of utmost significance for our country that has chosen the path of democratic development.

Բանալի բառեր – Եվրոպական դատարան, Եվրոպական դատարանի վճռի կատարում, պատասխանատվություն, իրավական պատասխանատվություն, հանրային-իրավական պատասխանատվություն, պետության պատասխանատվություն, պոզիտիվ և նեգատիվ պատասխանատվություն

Keywords – *European Court of Human Rights, execution of judgments of the European Court of Human Rights, liability, legal liability, public legal liability, state liability, positive and negative liability*

Ключевые слова – *Европейский суд, исполнение решения Европейского суда, ответственность, правовая ответственность, публично-правовая ответственность, ответственность государства, позитивная и негативная ответственность*